ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 07 >> 10 2014թ. N: 101 ք.Գյումրի

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 149-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի 26.1-ին և 26.2-րդ կետերի դրույթներով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Չիրացված սերմացուները 2014 թվականի հողօգտագործողներին անվճար հատկացնելու և համայնքների ղեկավարների միջոցով հողօգտագործողներին բաշխելու հետ կապված աշխատանքների իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 149-Ն որոշմամբ սահմանված գործընթացի իրականացումը և պարբերաբար ընթացքի վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 07-Ի N 101 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Հարություն Արշակյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձաժողովի նախագահ,

Մովսես Մանուկյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Ռուբեն Հարությունյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Անդրանիկ Նալբանդյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Արտավազդ Գևորգյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,

Ամալյա Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,

Շուշանիկ Մարտիրոսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ